## Համաձայնագիր N1

**17.06.2026թ կնքված N ՀՀ ԳՄ-ԷԱՃԾՁԲ-26/45-1 գնման պայմանագրի**

շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք.Գավառ 30. 06. .2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Ս. Մանուկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Գուլաբյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Կատարող>> մյուս կողմից , երկուսը միասին՝ այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 17.06.2023թ. կնքված N ՀՀ ԳՄ-ԷԱՃԾՁԲ-26/45-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին 17.06.2026թ. N ՀՀ ԳՄ-ԷԱՃԾՁԲ-26/45-1 ծածկագրով կնքված պայմանագրի մասով կնքել լրացուցիչ համաձայնագիր 7-13 տարեկան ճամբար մեկնող երեխաների թվաքանակի ավելացման վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը չի գերազանցում կնքված պաhմանագրի մինչև 10%՝ **341460** (երեք հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

**2.Այլ պայմաններ**

2.1Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2 Սույն համաձայանագրում չնշված ՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն Համաձայնագիրը է 1 էջից, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ , յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Գավառ
Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ08428824
Գլխ. քարտուղար Ս. Մանուկյան

/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**
<<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ
ք.Գավառ Սայադյան 4 Ամերիաբանկ ՓԲԸ
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ1570024528430200
ՀՎՀՀ 08413852
Տնօրեն Հ. Գուլաբյան

/ստորագրություն/
Կ.Տ